# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

# ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/78 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **09 սեպտեմբերի 2025թ.**

2025թ. սեպտեմբերի 9-ին, ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շենքում տեղի ունեցավ շինարարական վերանորոգման աշխատանքների ձեռքբերման ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/78 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ա. Հովհաննիսյան՝ | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Տնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր, |
| Կ. Չախոյան՝ | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Տնտեսական վարչության պետ, |
| Դ. Հակոբյան՝ | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Տնտեսական վարչության ինժեներ հակահրդեհային և անվտանգության գծով, |
| Ա. Ներսիսյան՝ | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի, Բանվորական աշխատանքների համակարգող, |
| Ն. Մկրտչյան՝ | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի աշխատակազմի Տնտեսական վարչության առաջատար մասնագետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Հովհաննիսյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Ա. Սարգսյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու մասին:
2. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:
3. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

## 1. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Ա. Սարգսյանը Հանձնաժողովի անդամներին տեղեկացրեց, որ Ընթացակարգի շրջանակում «Ագրոու» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում՝ 05.09.2025թ. ներառյալ չի ներկայացվել պայմանագրի և որակավորման ապահովումները, ինչպես նաև պայմանագրի հաստատված երկու բնօրինակ, և վերջիններս ներկայացնելու վերաբերյալ գրությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը, Հանձնաժողովը որոշեց.

1. «Ագրոու» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ 6-րդ չափաբաժնի մասով գնահատել անբավարար և մերժել:

2. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 6-րդ | «Ագրոու» ՍՊԸ | անբավարար |

3. «Ագրոու» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել համապատասխան գործընթաց՝ Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով:

4. Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով «Ագրոու» ՍՊԸ-ի հայտերը մերժելու վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ռեկտորին

5. Ընթացակարգի շրջանակում 6-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին, որը ներկայացված է ստորև բերվող աղյուսակում.

| Չափաբաժնի N | Մասնակցի անվանումը | Ընտրված մասնակցի դեպքում նշվում է "X" | Մասնակցի առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ |
|---|---|---|---|
| 6-րդ | «ԴՌՌՍԵՏ» ՍՊԸ | X | 12,078,425.00 |
| | «ԹՈՐԳ» ՍՊԸ | | 12,167,125.00 |
| | ՋԻ ԷԼ ԹԻ ՍՊԸ | | 12,472,500.00 |
| | «ՎԱՎԼ» ՍՊԸ | | 13,000,000.00 |
| | «ԱՐՍՏՈՆ» ՍՊԸ | | 13,220,000.00 |
| | «Անահիտ Փոլադյան Հակոբի» ԱՁ | | 13,222,000.00 |
| | «Նաիրա Խաչատրյան Սամվելի» ԱՁ | | 13,750,000.00 |
| | «Մուրադյան Շին» ՍՊԸ | | 13,850,145.00 |
| | «ՎԱՀԱ-ՇԻՆ» ՍՊԸ | | 14,000,000.00 |
| | «Լիմպիեզա» ՍՊԸ | | 14,000,000.00 |
| | «Արփի Շին» ՍՊԸ | | 14,450,000.00 |
| | «ԲԱՁԵ 535» ՍՊԸ | | 14,800,000.00 |
| | «ԻՆՏԵՌՈՍ-ՊԱՌԵՔՍԳԼՈՄ» ՍՊԸ | | 15,000,000.00 |
| | «ԱՐԵԳ ՇԻՆ» ՍՊԸ | | 15,500,000.00 |
| | «Հազարաշեն ԱԿ» | | 16,000,000.00 |

| | | | |
|---|---|---|---|
| | «ՇԻՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՍՊԸ | | 16,400,000.00 |

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 2. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Ա. Սարգսյանը Հանձնաժողովին ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել Ընթացակարգի շրջանակում հրապարակվող հայտարարությունները հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց պայմանագրերի նախագծերը: Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել պայմանագր/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը,
2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակիցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ա. Հովհաննիսյան ______________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Կ. Զախոյան ______________

Դ. Հակոբյան ______________

Ա. Ներսիսյան ______________

Ն. Մկրտչյան ______________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Ա. Սարգսյան ______________